

ՅԻՇԱԿ

, ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՐԵՖՈՐՄՆԵՐԸ

III.

1-Ն Օգոստոսի 1895 թ.

Տաճկական պետութեան ամբողջութիւնը և Փարք-Ասիայում ներկայ քաղաքական դրուժիւնը պահպանելու անհրաժեշտութիւնն է ծնունդ տվել այն հոչակաւոր րէֆօրմների ծրագրին, որով զբաղւած են այժմ այնքան ուղեղներ և որը, իբրև մի լաթ, դեռ շարունակւում է քաշքշել . . . , որովհետև դրանց՝ այդ ամբողջութեանը ու statu quo-ին, ինչպէս քանիցս ասել ենք, վտանգ՝ է սպառնում. այդ վտանգ սպառնացողը դարերով ստրկացած հայ ժողովուրդն է, որ այսօր գլուխ է բարձրացրել ու իր մարդկային իրաւունքների յաղթանակն է պահանջում. և դրան հասնելու համար նա, ժողովուրդը, դիմում է յեղափոխութեան: Աւքեմն Հայկական րէֆօրմների ծագման կէտր Փոքր Ասիայի ներկայ քաղաքական փրկինօմիային սպառնացող Հայկական յեղափոխութիւնն է:

Համոզենք, որ այս է ճշմարտութիւնը. Համոզենք, որ իսկապէս րէֆօրմները մի միջոց են վերսկեալ սպառնացող վտանգի առաջն առնելու, որի իրականանալը շատ ծանր հետևանք կարող է ունենալ եւրոպական պետութիւնների համար, եթէ նրանցից իրաքանչեւրն աշխատի օգտել այդ հանդամանքից՝ ինչպէս իւր շահերն են պահանջում. և հայ ժողովրդին ու միմենց փոխադարձ զինում չանեն: Մենք պնդում ենք, որ դիպ-լոմատիայի դրդիչ ոյժը՝ խառնւելու Հայկական շարժմանը իրենց պետական շահերն են. և ոչ թէ մարդասիրութիւնը և այն, ինչպէս նրանք և նրանց արբանեակներն են աշխատում հաւատացնել հայ ժողովրդին. մենք այդ ցոյց տվինք քաղաքական-տնտեսական դրական հիմնեներով:

Բայց բաւական չհամարենք այդ և հաւատանք կենդանի մարդկանց խօսքերին՝ դիպօմատներին, որ սրանք

դեկավարւում են բարձր, մարդասիրական գաղափարներով, հաւատանք, որ դիպօմատները իբրև մարդկեկ ընդունակ են մոռանալ մի բոպէ, հազարաւոր դիմակների, աւերակ դարձած ու մարդկային արիւնով ողողւած երկրի առջև, որ իրենք ոչ միայն պետական անձեր են, այլ և իբրև մարդ ունին խիղճ, զգացմունք, որ գիտեն զգալ, յուզգիլ և արտասունքներ սրբել . . . Հաւատանք, և դիմենք նրանց մարդկային խելքով կազմած րէֆօրմների ծրագրին, որ պիտի զերջ տայ աիրող սարսափելի գտանային բարբարոսութեանց, սպեղանի լինի վերքերին և աւերակ ու սգաւոր երկրի թշւառ որդեկրանց միմիթարէ . . .

Բայց նախ քան դիմելը երեք պետութիւնների կազմած րէֆօրմների ծրագրին, պիտի գնել իբրև ընդհանուր հիմնենք՝ որ մի ծրագիր այն ժամանակ ունի raison d'être, գոյութեան իրաւունք մի որ և է երկրի համար, երբ այդ ծրագիրը կազմւած է միաժամանակ թէ նոյն երկրի ժողովրդների և թէ ընդհանուր մարդկութեան կեանքի պահանջների համեմատ, և երբ այդ ծրագրի հիմքը կազմում է այն հողը, որին պիտի պատւաստի. այլապէս՝ ծրագիրը այն ժամանակ է բաւարար և կենսական, նա այն ժամանակ կարող է դարձանել ժողովրդի ցաւերը, երբ այդ ծրագիրը կազմւած է նոյն ժողովրդի հասարակական կեանքում գոյութիւն ունեցող տնտեսական յարաբերութիւնների, փիլիսոփայական-հասարակական հայեացքների, հասկացողութիւնների ու սովորութիւնների համեմատ, իսկ միւս կողմից, միաժամանակ նրանք րէֆօրմները, կապել են վերսկեալները այն հասարակական կազմակերպութեան ձևի հետ, որը ծնունդ է մարդկութեան տնտեսական կեանքի ու նրա փիլիսոփայական-հասարակական հայեացքների, որոնք, իբրև անհրաժեշտ պայման մարդկութեան յառաջադիմութեան և մարդկանց երջանիկ ապրելու համար՝ պահպանում են թէ մարդկանց աշխատանքը և թէ աշխատանքի արդիւնքից արդարացք կերպով օգտելու կարելիութիւնը ու տալիս ազատ ապարէզ և նպաստաւոր պայմաններ զարդացնելու մարդ-

կային ֆակուլտէսերը, կարողութիւնները, որոնք անհը-
րաժեշտ են մարդկանց՝ թէ իրեւ անհատի և թէ իր-
եւ համարակական էակի:

Եթէ ծրագիրը չէ կազմած այս երկու հիմունքների՝
իրեն ժողովրդի և ընդհանուր մարդկային կեանքի պա-
հանջների համեմատ, այդ ծրագիրը ոչ միայն կը մատ-
նի մեռելութեան, այլ և կը ընկի վասակար, մի չա-
րիք նոյն երկրի համար. նա ոչ միայն պապակւած ուր-
տերի վաս չի կարող մի կամիլ սառը ջուր գցել այլ
և նրանց կը խորովի, կայրի. . .

Ընդհանուր տեսութիւնից անցնենք մասնաւորի և այ-
ժը մենք կանգնած ենք համբաւաւոր բէֆօրմների
ծրագրի դիմաց.—

Այդ բէֆօրմները կազմւած են Տաճկահայաստանում
տիրող պայմանները փոփոխելու համար. սրանից պար-
զապէս հետեւում է, որ դիմումատիան անբաւարար է
համարել ներկայ դրութիւնը: Դիմումատիան անբա-
ւարար համարելով ներկայ պայմանները, նա պիտի
խմբագրէր այսպիսի բէֆօրմներ, որոնք կարողանային
փոփոխել նրանց, որ ասել է թէ տիրող չարիքը ո-
չնչացնելով պիտի առաջ բերէին տեղական բնակիչների
համար նպաստաւոր պայմաններ: Խոկ այդ կարելի էր
միայն այն ժամանակ, երբ նա ի նկատի առած կը
լինէր երկիրը և նրա ժողովրդները՝ իրենց պատ-
մական կեանքով ու կուլտուրայով, երբ նա արհա-
մարած չէր լինի երկրի համարակական կեանքի հի-
մունքները՝ նպաստաւոր ու աննպաստ կողմերով, անտե-
սական, քաղաքացիական և իրաւաբանական յարաբե-
րութիւնները ու լուրջ ուշադրութեան առած կը լի-
նէր ամբողջութեամբ այդ տեղ թագաւորող չարիքնե-
րը և ղեկավարւած հումանիստական գաղափարով: Եւ
այն ժամանակ, առաջի կէտը, որ կը գրաւէր բէֆօրմ-
ներ կազմողների ուշադրութիւնը այդ կը լինէր Տաճ-
կահայաստանի ներկայ տնտեսական կեանքը ու քաղա-
քական վիճակը, որոնց նրանք կը գտնէին ոչ միայն անբա-
ւարար, այլ և բոլորովին հակամարդկային և անհրա-
ժեշտ անմիջապէս արմատական փոփոխութեանց են-
թարկելու. և նրանք՝ հայ ժողովրդի կեանքում արմատ-
քունած լայն ընտրողական սկզբունքը մտցնելով կա-
ռավարչական բովանդակ գործողութիւնների մէջ խսկոյն
ձեռնամուխ կը լինէին հարկերին ու հողային խնդրին,
սուլթանի-կենտրոնական կառավարութեան իրաւունքնե-
րին և կառավարչական սիստէմին իր ճիշդաւորութեամբ,
ժողովրդների յարաբերութեանց ու նրանց մտաւոր և
բարոյական կեանքին, մի քանի գասակարգերի վերա-
բերումը դէպի ժողովուրդը ու սրանց փոխադարձ, յա-
րաբերութեանը և այլն:

Բէֆօրմները պիտի շօշափէին գլխաւորապէս այս
խնդիրները. մինչդեռ դիմումատիան թողել է կենսա-
կան խնդիրները, թողել է չարիքը իւր արմատում և
միայն վերցրել է խնդրի արտաքին կողմը, մակերևոյթը:
Նրա առաջին հոգու եղել է որբան հնարաւոր է, ը-
դիպէլ սուլթանի միապետական իրաւունքներին, այս-
ինքն՝ չարիքը արմատում թողնել և գլխաւորապէս
ծանրացել է պաշտօնեաների ինչ կրօնի լինելու վրա
և այդ հարցը վճռել է նրանց ոկազրիլ պար ածե-
լով. այսինքն, եթէ շրջանի, գաւառի, գաւառակի աղ-
գամնակութեան մեծամասնութիւնը քրիստոնեայ է, այն
ժամանակ կառավարիչները քրիստոնեաներ են, իսկ
օդնականները մահմեդական, և հակառակը. իսկ դրանց
իրեւ խորհուրդատու ընտրում է յանձնաժողով, որի
անդամների կէսը քրիստոնեայ են, կէսը մահմեդական
եթէ ազգաբնակութիւնը խառն է, եթէ ոչ՝ յանձնաժո-
ղովի բոլոր անդամները պատկանում են ազգաբնակու-
թեան կրօնին. կարծէք թէ չայկական խնդրի էութիւնը
կայանում է կրօնի մէջ. բոլոր պաշտօնեաները նշանա-
կում է սուլթանը, կիսապաշտօնապէս յայտնելով եւ-
րոպական պետութիւններին. տուրքերի բաշխման ձերի,
սիստէմի, տեսակի և քանակութեան մասին ոչ մի բառ,
թէև հաւաքած տուրքերի մի մասը պիտի մնայ եր-
կրի ծախսերը հոգալու, այն էլ ոչ համաձայն կառա-
վարութեան կողմից հաւանութիւն գտած բիւդժէին, կալ-
ւածական հարցը թողւած է ապագայում կազմելիք մի
ինչ որ յանձնաժողովի, իսկ միւս տնտեսական հարցերի
մասին ոչ մի յիշատակութիւն, ինչպէս և ժողովրդի ի-
րաւունքների, մամուլի և այն մասին, որոնց ցուցակը
շատ երկար է և թերել պապարդիւն. . .

Այժմ ասացէք, ո՞րտեղ է այն արմատական փո-
փոխութիւնը, որ մտցրւած է երկրի քաղաքական ու վար-
չական իշխանութեան, մարմինի մէջ. ո՞ր չարիքի առաջն
է առնւած, ո՞րտեղ է հումանիստական գաղափարը,
ո՞րտեղ է ժողովուրդը և նրա իրաւունքները, ո՞րն
է ժողովրդի պահանջներին բաւականութիւն տալիս,
ինչով են ապահովում նրա աշխատանքը, պատիւը
կեանքը, և վերջապէս ինչով է վերջ գնում դժո-
ւային դրութեան. . .

Զ Խ Ո Ւ Ի Բ Ի Կ Մ Ո Ւ Ի Ի Ը

(ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ)

Յովհաննէս Ագրիպասեանի և Ալեքսանդր Գօլօշեանի
անմուաց գերեզմանների շուրջը մի կուի ևս:

Մայիս 30-ի գիշերն է: Արիւնալի աղօթարանը բաց-

ւում է: „Դաշնակցութեան“ հայդուկային խումբը վազում, թռչում է. նա այլ ևս չի նայում ոչ ջրի, գետի և ոչ քարի, կրակւած է ու համերաշխութեամբ սլանում է, որովհետեւ լցում մօտենում է... Ընկերները մինչև ծնկները ցեխի ջրի մէջ են, այրում են, ոտքերի տակը պողոճակներ են դուրս եկած. ոչինչ անմօնիմ ես այդ յոգնած ոտքերին: Լցում բացւում է, մեր ընկերները հազիւ իրանց ձգում են Չուխ գիւղից կէս ժամ հեռու, Գիւղալդարա ձորի բերանը և խսկոյն թափնում են ցածր, շատ ցածր գիրքի վրայ քարերի տակ: Բոնում են երկու, իրարից բաւական հեռու դիրք, իսկ բարձր կէտում գնում պահապան:

Ժամը 8-ին (երրորդակի) երեսում է Չուխ գիւղից մի քիւրդ, միամբու մօտենում է խմբին ցածրի դիրքից: Պահապանն իսկոյն նկատում է այդ, մինչ այս այն քիւրդը փախչում, անհետանում է: Չանցած մի ժամ, պահապանը նորից լուր է տալիս, թէ Չուխի հաւարը թափնեցաւ: Քնիատ, ջարդւած հայդուկները թռչում են իրենց հրացանների գլուխը: „Կոիւ, կոիւ, գուռում են մեր ընկերները, երգ“: Հասնում է և Դուաւայի հաւարը: Հաւարի են հասնում նաև Չուխ կիրճի պահանոցի ծոյլ զաֆտիաները:

Ըստ երեսթին 100-ի չափ են թշնամիները, թէ քիչ հրացաններով: Արժէ կուել և պայթում են առաջին անգամ մեր ընկերների հրացանները, տաքանում է կոիւրը: Առաջի քայլին երկու հատ գլուխում են թշնամուց, որ հազիւ նկատում է մերնիցից: Սակայն քիչ ժամանակից յետոյ քիւրդերն ու անվարտիկ զաֆտիաները՝ տեսնելով յեղափոխականների անգութ և փորձւած գնդակները փախչում են հեռու, գոռալով ոփախեք, փախեք, սրանք եւ են, սրանք մեզ կը կոտորեն: Դիրք են բոնում հեռու և գլուխները քառերի տակից դուքս չեն հասնում: Կոիւն անտանելի է դառնում, դանդաղ, միայն երբեմն երբեմն հրացան է պայթում: Քիւրդերը հաւարի էին դրկած բաշկալա և Խօշաբ, որոնց մէջ տեղն էր գտնում մեր հայդուկային խումբը: Աչս օրին քիչ էլիս սկսում է սաստկանալ, բայց հեռուից: Խումբը մաս մաս կուռում և հերթով քնում է, արհամարելով պայտիսի զգելի կոիւրը և ինքն այնպիսի հանգամանքների մէջ էր, որ չեր քարող հետամուտ լինել: Երեկոյեան դէմ կոիւրը քիչ քիչ սկսում է տաքանալ, բայց երբ երեկոյեան ժամը 5-ին թափում են երկու գաւառներից օգնութիւնները, գնդակները սովորմ են, Չուխի շղթաները կրկնապատկում: Շուտով մթնում է, հերոնների խումբը ծղում անցնում է այդ հարիւրաւոր գայլերի միջից բոլորվին անվաս, և անվագով շարունակում իւր ճանապարհը...

Բաշկալայից լուր առանք, թէ երկու զաֆտիա և երկու քիւրդ են սպանւած, ոմանք ասում են աւել, ոյնք պահաս, իսկ քրդերը միշտ ծածկում են:

—Կուրից յետոյ:

Այնուհետև Խօշաբից պաշտօնական հեռագիր զըրկւեց կուսակալին: Կասկածելով, որ յաշնակցութեան խումբը կը թափէ Վան, իսկոյն Վարսավ լերան աջ և ձախ կողմի փոքրիկ կիրճերի վրայ կօրդոններ գրին, բըն-


նեցին այդ գաւառների բալոր ճանապարհները:

Սուարիներ զգկւեցան Վանից Գոէլ հայ գիւղը, Շըտկեավութեան և ուրիշ գիւղեր, զուր, զուր:

Հարեմին արժանի սուլշման, սրանք բօղազքեասանի գնդակներն էին, սրանք կը ճղեն ամեն ուղղութեամբ: Կեցցե՞ն հայդուկները:

Մի քանի օր առաջ մի այլ, լոկ միայն փրփուր հանող խումբ սահմանից ներս մտաւ և..., առանց դիմագրութեան յանձնատուր եղաւ և Վասպուրականի առանց այն էլ պահպանողական ժողովորդի ոգին թուլացրեց: Աւրախ ենք, այս լնդհարումը մի քիչ սիրտ տւեց:

—Լում ենք, թէ Մոկսում չորս գիւղ են թալանել և 12 մարդ սպանել քիւրդերը, շուտով կը ստուգէի: Իր թէ 12 կանայք ևս բոնաբարւած են:



Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ա Ծ Կ Ե Ր Տ Ի Ց

Հայաստանի գաւառներէն ամենէն խուլ անկիւն Ալաշկերտն է: Կը թալնին, կը տանին, կսպանին և այս ամենը կը մնայ անյայտ: Քիւրդ բէկերի ու տաճիկ պաշտօնեաների կամայականութեանց չափու սահման չի տեսնէիր: Յիշենք այստեղ մի քանիսը մեր տառապեալ ժողովորդի դառն վիճակի հետ մօտաւորապէս ծանօթացնելու համար:

Քիւրդերը օր ցերեկով Ա. Յովհաննու վանքի միջէն տարան Բօդիկա գիւղ Յովհաննէս եպիսկոպոսի եղեօր աղջիկը և սրա երեք տարեկան որդին: Ահա երկու ամս է, եպիսկոպոսը գացած է Բայազէդ՝ փաշայի քով բողքաբելու սակայն աղջիկը գեռ ևս չէ յանձնւած իրեն: Քիւրդերը անցեալ աշնան ուժով մտան ներքին Բօդի գիւղը, բռնի գրաւեցին հայերի տները և ապրանքը: Խեղձ գիւղացիք ձմեռ մեջ և նուռ Պուճախ գիւղում: Ազմ եպիսկոպոսը միջնորդութեան շնորհիւ քրդերը հեռացած և հայերը բռնած են իրենց տեղեր:

Խումբու Պուճախ գիւղում քրդերը գիշերը յարձակւեցան Պօղոս աղայի տան վրայ ու եղեօրը վիրաւորելով տարան տան բոլոր թանգագին իրերը:

Նոյն գիւղում մշտապէս նստած Մուրադ պէյը որը Ալի աղի մարդն է և անվերջ գէշութիւններ կընէ բոլորովին անպատիժ, կատարեալ պատուհաս դարձած է գիւղացոց համար: Խոկ ինքը զիլանցի Ալի աղան քուբրան գիւղ կը նստէ:

Նոյն է Ռուբագամ բէկ միթիազիմը Խըրբը գիւղում:

Զօղացի Բագր էֆ. քեատիպ քիւրդը Դիագին գիւղն տարաւ 8 եղ, 30 ոչիսար, 50-60 սոմար ցորեն ու գարի վիրաւորելով հանգում 3 մարդ:

Խըրբը գիւղում քրդերը եկեղեցին բնակութեան տեղ մն շինած, աւազանը բռնխարի և մէջն էլ երկու թունիր փորձած:

Խօնջալու գիւղից Մէհմէդ աղան (Նադօյի լամաւկ)

տարաւ 20 եղ, և վիրաւորեց հօտաղին: 8 ոսկի առնելով, եզները ետ տւեց:

Մանկասար գիւղից Բալո և Աւդրահման ղաջաղները տարան 10 ոչխար, 20 սոմար ցորեն: Իսկ անցեալ գարնան սպանեցին տէրտէրի եղոր տղուն: Աւդրահմանը այժմ սպանւած է, իսկ Բալոն ձերբակալւած:

Սակայն քրդեր ամեն անդամ անպատիժ չեն մնար: Քրդերի քարվան կանցնէր Եօնջալու գիւղի մօտով: Քրդեր դիւղ կը մտնին և կը պահանջին հաց, իւղ: Հայերը կը դիմադրեն և ծագած կուռում կը ջարդին քրդերին ու գիւղէն դուրս կը վրնդին: Այս առթիւ 12 հայ 20 օր բանտի մէջ կը մնան և 8 ոսկի տուգանք տալէն ետքը կազմատւին:

12 քիւրդ կը յարձակին նոյն Եօնջալու գիւղի վրայ կը քշին նախիրը: 6 հայ տղերը հաւարի կը համնին, և երկու քիւրդ վիրաւորելով, կը փախցնին միւսներին ու նախիրը կը խին: Կը խին նաև երկու խէնչար և մէկ թուր:

Հարաքիլիսում աչա 4 ամիս է, ձերբակալւած կը պահէն 14 հայ վաճառականներ: Անոնց միակ մեղքը ստակ ունենալին է: Թաթախման գիշերը ամբոխը կառավարութեան պաշտօնեանների դրդմամք պատրաստութիւն կը տեսնէր յարձակում գործելու հայերու վրայ: Իսկ երբ հայերը (Հարաքիլիս, 80 տուն հայ և 100 տուն տաճիկ) նկատելով այս, իրենք ևս սկսան պատրաստութիւններ տեսնել պաշտպանութեան համար, տաճիկ ամբոխը ետ կայնեցաւ այդ մտքէն:

Նոյն տեղ գիշերով երեք մարդ սպանեցին և 2 աղջիկ ու մէկ կին յափշտակելով, բիմբաշին տպան:

Եօնջալու գիւղում ձերբակալւած է և կարին տարւած Տէր Յովհանէս քահանան:

Կառավարութիւն ամենեին յետ չի մնար քրդերէն: Գաղթականների մասին ոչ մի հոգ չի տաներ, և աւելի խստութեամբ կը վարւի ժողովրդեան հետ: Հարկը, որ կը հաւաքւեր առաջ 4 ամսւայ ընթացքում, այժմ կը հաւաքւի 2 ամսւայ: Չնայած որ հունձը այս տարի լաւ պիտի լինի, յոյս չկայ բնաւ, որ ժողովրդի տանջանքները մեղմանան:

Աչա այն գիւղերի ցուցակը, որոնք գատարկւեցան և քրդերով լեցւեցան: 1. Գուպղըան (40 տուն), 2. Զիրոն (30 տուն էր, մնացեր է միայն 2 տուն հայ), 3. Խըրդը (40 տ.), 4. Խալանդատ (20 տ.), 5. Ներքին Բօդի (30 տ.), 6. Կեավոգեավք (20 տ.), 7. Նօվրուզ վանքի գիւղ (30 տ.), 8. Սօֆիա (30 տ., բռնած են ուուսաստանից գաղթած թարաքամաններ):

Նորէն վերջերս վերադարձած են իրենց տները եպիկոպոսի միջնորդութեամբ՝ 10 տուն Ներքին Բօդի, 3 տուն Խըրդը:

Ե Ա Զ Պ. Ա. Տ ի

Ա. Ի Դ Ի Վ Ի Ճ Ա. Կ Բ

1893 տարւայ կոտորածին նկարագրութիւնը ըթած եմ ձեզ լսու կարելոյն: Կապելու համար հայ սրտերու վեւկերը, զորս բացած է յիշեալ ջարդը, Էնկիւրիի կուսակալ Մէմտուհ փաշա և Մուստաֆա փաշա, որ իր մոլեռանդութեամբն և անգթութիւններով նշանաւոր է ու եկած է իր բարբարոս, կեղեքիչ իշխանութիւնը դիակներու ու աւերակներու կանգնեցնող մեր ու արդարակորով սուլթանի կողմէ, կը սկսին գործել կարդ մը անմեղներով լեցունելով բանդերը, որոնք արդէն լեցուն են հոդեար վիրաւորեալներով: Բանտարկեալ քրիստոնեաններից իւրաքանչիւրին յարմար զբարտութիւններ պատրաստելով՝ բաժնեցին 200-ի չափ իսլամ սրիկաններու, յետոյ շղթայակապ հանեցին զանոնք պատերազմական ատենին առջեւ: Հոն դատաւորները սուտ վկայութիւններ լսելէ յետոյ, առանց մոտիկ ընելու այն արդար գիտողութիւնները, զորս կընեին զրաբարտեալները ամենքն ալ դատապարտեցին տարբեր պայմանաժամբուրով: Օրոնց 17-ը մահւան: Եւ ինչո՞ւ ըընեն, երբ այս խժդութիւնները կառավարութեան թելաղութեամբ և մինարէներու բարձունքն միւէզիններու ըրած մէկ նշանովը կատարւած են: Յիշեալ կուսակալն ու պատերազմական ատենի անդամներն, որոնք տեղական կատարած են կատարւած բոլոր չարագործութեանց, մտքերնէն անդամ չէ անցեր պատժել մի քանին այն պաշտօնեաններէն ու երևելիններէն, որոնք սոսկ անձնական նկատումներով հրապարակը աղմուկով լեցունելով՝ ժողովրդեան անհուն վնասներ հասցնելու պատճառ եղած են: Մինչդեռ անդին՝ յանդերուն խորշերը, 180-ի չափ անմեղներ յանձնած են դազանաբարոյ և մարդասպան բանդապահներու, որոնց վայրենի բնաւորութեան հնարած սոսկալի տանջանքներու տակ կը չարչարին և որոնց արձակած աղաղակների բնաւ ու է աղդեցութիւն ըըներ յիշեալ տանջողներուն քարացած սրտին ԱՇ, այս բարբարոս ու անդութ կառավարութիւնը գեռ կապի ու չի չքանար աշխարհիս վրայէն... Բայց կը յուսանք, թէ լուսաշող արել վերջապէս օր մը, ինչպէս ուրիշներուն, նմանսապէս մեր անկախ կենաքը պիտի լուսաւորէ: Սակայն ախսո՞ս, անոր ճառագալթները անթիւ աւերակներու ու զոհերու վրայ պիտի շողջողան...

Այն պաշտօնատարք, որոնք որպէս թէ արդարութիւնը ի գործ դնելու և խաղաղութիւնը վիրահաստատելու համար եկած էին, աւերակ, սոսկում և սարսափ սիրեցին չորս կողմ, մոխերի վրայ նստեցուցին նողղատի բնիկ հայ ժողովուրդը: Ըրջակայ հայ գիւղերուն մէջ, տուրքերու գանձմանն համար եղած գոմեշ և այլ կենդանիներ ու աւարկաներ գրաւելով աներւակայելի ածան գներով կը ծախսն թուրդ գնորդներու, որոնք արդէն ընկեր են թահսներաներուն: Եղած ձերբակալութեանց շնորհիւ, ժողովուրդն անկարող եղած

է իր արտն ու այդին մշակելու: Եւ արդէն Նըրկա-
գործական գրամատունն ալ դադրեցուցած է իր կո-
խառութիւններն հայոց, որով անօթութիւնն ու թշ-
ւառութիւնը սոսկալի կերպով կը տիրէ հայ գիւղերու
մէջ: Գոհ պիտի ըլլայինք, եթէ Քննիչ-Յանձնահումբին
անդթութիւնները ասոնք միայն ըլլային: Ասոնք թուրք
ժողովուրդն ու զինւորները այնքան շինացուցած ու
քաջալերած են, որ անոնց աչքին շան մը չափ իսկ
յարդ և արժէք չունի հայ մը: Թահօնելլարներն ու
զինւորները, տուրք հաւաքելու պատրիարքաւ, խումբ
խումբ գիւղերը կը թափին. ուր ժողովուրդը, ինքը
արդէն չըր հացի կարօտ՝ հաւով ու վառեակներով
կը կիրակրէ զանոնք և անոնց մաղւած ընտիր գարի-
ով: Եւ այդ բարբարոսները, ենծելէ, հայհայելէ և, ան-
պատճառ, անոնց պատիւը բռնաբարելէ յետոյ, կատի-
պին, որ ականատես ժողովուրդը համութեամբ ընդու-
նի ասոնք ու բնաւ բողոքի ձայն ըքարձրացնէ: Քամինի
քանի անդամ աեւնւած է, որ որ գիւղը մէջ գեղեցիկ
աղջիկ կամ հարս գտնւած է, կտուշարնւթեան զօր-
քերը անժիշտապէս կոխած են անոր տունը և, կտուիլ
յետոյ անոր նշանածը կամ երիկը անոնց ներկայու-
թեանը պղծած ու յագեցուցած են իրենց գազանային
կը կը երը. ու կառավարութիւնը, որ այս ամենուն ակա-
նատես եղած է, բնաւ կարեւորութիւն չէ տւած:

Սա դեպքը կրնայ գաղափար մը տալ այն ընթացքին վրայ, զոր կառավարութիւնը բռնած է Հայերուս դէմ: — Ուկունյու ըստած տեղը, ուր կը գտնի կառավարական պալատը, թուրք զիւոր մը Տաղիկ անոն հայ աղջկան մը կուսութիւնը կը պիծէ բռնի: Աղջկան հայրը կը գտնի ատաւի այդ զինորի հարիւրապետին, որ սա պէս կը պատասխանէ՝ «աստեղ մանի մունը բաներու համար մի՛ բողոքեք, եթէ ոչ ամենքդ ալ բանտի կը եցունեմ»: Ահա այս ամուսիններն, հայրենին ու նրանածներն են, որոնք խումբ խումբ «Արդարութեան գուռը» կը դիմն՝ դարձան խնդրելու համար այն վէրքին, որ իրենց աղջկան, հարսին կամ նշանածին պատիւը այդ վայրենիներու գտնանակին կրթին զոհւելէ գոյացած է իրենց սրտին վրայ, զոր իր ժիակ դարման «ձեզ բանոր կը լեցունեմ» կը սի: Պատճառու, — որու հետև զատիւ կը ինտուեն, իրաւունք կը պահանջենց իրենց պաշտպանելու կը համարձակին: Ահա, անոնք դիակնային զիճակ մը ունին նիւթապէս, պէտք չէ՞ միւնքն միճակին ենթարկել բարոյապէս ալ:

Մարզւանի կօլեժի շրջանաւարտներէն Գասպար Լոբ-
տեան, իր ըորս ընկերներով մէկտեղ աւելի քան ե-
րեք տարիէ ի վեր կը փախին Եռզգատի բանդին մէջ,
առանց գատճառուի Ասոնք մահւան գատազարտեցան
ամենափոքր ապացոյցի մը իսկ չգոյութեան և Հակառակ
այն հարիւրաւոր վկաներու, որոնք կը հաստատէին թէ
ամբաստանութեան օրը Մարզւանի մէջ չէին գտնւեր
յիշեալները պյլ հաճի-Քէօս Պօլսոյ անգլիական դես-
պանին միջնորդութեամբ Էնկիւրիին զրկեցան՝ այն տեղի
վերաբնիչ ատենին առջև վերստին դատւելու համար
Անգլիոյ հիւպատուսին Ներկայութեանը երևան եւած է
յիշեալներու անմեղութիւնը՝ բայց այն պահուն, երբ

բոլորովին անպարտ ըլլանին պիտի հաստատւեր, վերա-
քննիչ ատենի անդամք, որոնք ուզածնուն պէս կը վա-
րին արդարութեան գործերը, զանոնք Խոզդատ կը գը-
րին վերստին, առանց ու է վճիռ արձակելու: Հոն
մութ և խոնաւ զնտան մը կը նետին և անկէ վերջ
բնաւ անուննին չէ յիշւած, որպէս թէ մեռած ըլլային
խեղճերը:

Քաղաքին երևելիներէն՝ Խալիլ, Խալիտ, Լուժտօք և
Օսման պէյերն ու Սալիհ և Հաճի Հաշըր էթէնտինե-
րը, որոնք դատարանի և մէջիսի իտարէն անդամներէն
են, բոլորովին կը կողոպատեն Եռզգատի և ըրջականերու
բոլոր հայ ժողովուրդը։ Առաջները, երբ թուրք մը
հայու մը գէշութիւն ընել ուզեր, բաւական էր որ
ըստր թէն կեաւուր տինիմէ սէօյտիւ (անհաւատը կրօն-
քին հայհցեց), երկու սուս վկայով կամ լեզուն կը
կտրէին և կամ կաթորէին. իսկ հիմայ, . . . սկեաւուր
գօմիթէ տիր ըսւեցաւ մի, վկայի ալ գէտք չկայ. կամ
յիշեալ պէյերուն և էֆէնտիներուն ուզածը տալու է
անգատձառ, եթէ բոլորովին կարողութենեդ վեր ալ
ըլլայ և կամ կրելու է այս սոսկալի՝ շըթաներն ու
նորահնար տանջանքները՝ զորս կուտան գօմիթէ ա-
նունով:

Եռզգատի բոլոր գաւառակներու մէջ մէլմէկ տէրէ-պէյիներ կան. ասոնք այն աստիճան քաջալերւեցան Քննիչ-Յանձնախմբին հայոց դէմ բռնած լնթացքէն, որ ողուկը գօմիթէ էք, ըսելով, բանտարկել կուտանք՝ սպառնալիքներով հայերը կը տանեն կառավալարութեան դուռը և հոն՝ սաթդըմ, փարասընը թէմամէն ալդըմ” (Ճախեցի և ստակն ալ առի ամբողջովին) ըսել առաջով՝ առանց ստակ մը վճարելու, իրենց վրայ դարձնել կուտան, այն արտերն ու աղօրիեները, այդիներն ու պարագները, որոնք ժողովադեան կեանքն են, միակ հարստութիւնը։ Դատաւորները ընկեր եղած են այս կեղերիքներուն հետ։ Ասոր վրայ ժողովուրդը կը բողոքէ Նահանգին կուսակալին, որ զանոնք կանչելով իր մօտ, ցՍց կուտայ այն ամեն բողոքագրերը՝ որոնք ժամանացած են իրեն, յետոյ այլ և այլ սպառնալիքներով մէկէն 200, միասէն 300 ոսկի առնելով՝ թող կուտայ։ Այդ շարագործներն են՝ գլրչէ հերցի Քէօր օղլու Հիւսէին պէյ, Խաթուն օղլու Ալի պէյ, որ պաշտպան, է հոչակաւոր աւազակ Գըչար պէյ օղլու և անոր հետեղըներուն՝ նշանաւոր հարստահարիչ կեսարացի Խաղահիմ, Եռզգատի պէյերն ու ուրիշները։ Ահա այն բողոքագիրն, որոնք կուսակալին՝ անոր, որ պարտաւոր է իրենց պատիւն ու իրաւունքը պաշտպանելու, այսպէս քաջալերանքի գործիք մը եղաւ։ Ահա, որո՞ւ դիմէ խեղճ ու անտէր ազգը անգութ գազաններու ձեռքը մնացող այս թշւառ ժողովուրդը, որո՞ւ յայտնէ իւր ցաւը։ Նիւթապէս և բարյապէս ոչնչացած ենք։ Ծատ մը թերթեր լեցնելու է նկարագրելու համար այդ տէրէպէյիներէն բումուեյին գիւղացի Զերքէս պէյ զատէ Հիւսէին և Օմար պէյերուն ու իրենց 7-8 հատ զաւակներուն գործած հարստահարութիւններն ու կեղեքումները Ուստի, մենք այդ ամենը մի կողմէ դնելով սաշագը կըսէկը, թէ ասոնք աւազակի խոսքը մը ունին

իրենց ձեռքի տակ, կեսարիոյ և բումուշինի միջև, որոնք անխնայ կը կողոպտեն ու շատերն ալ կը սպանեն այն ամեն քրիստոնեայ ճամբորդներուն, որոնք առետուր ունին կեսարիոյ հետ: Անցեալ տարու հոկտեմբեր ամսոյն մէջ կողոպտած ու սպանած են թէքչէլի գիւղացի Յակոբ քէչեան և վերջերս ալ կիւրտէցի Խաչատուրը և ուրիշներ, որոնց անունը չէմ կրնար յիշել: Հոկտեմբեր վերջերը դարձեալ մի և նոյն ճամբուն վրայ, 7 քրիստոնեաներու քիթն ու ականջը կրտրած և գրաննին դրած էին: Ուզունլուկ դատարանը անձամբ քննեց ու տեսաւ ասոնք, բայց բնաւ չհետապնդեց չարագործները. որովհետև ատով վշտացուցած պիտի ըլլային Հիւսէյին և Օմար պէյերը. որոնք աւազակներուն ազգականներն են: Երբ գայմագամն, մուժասարը ֆն ու կուսական ընկեր են իրենց հետ, այլ ևս կըզդուշանան ամեն տեսակ չարագործութիւններ ընել: Քրիստոնեաներուն համար ասոնք գիտնալ, ուրիշ մը հազորդել և կամ կառավարութեան դիմել ոճրագործութիւն մըն է. բանտ ու տանջանք պատրաստ է իրենց համար, եթէ ոչ պէտք է գրաւոր խոստվանել, մէկ իրենց ըրածը պարզապէս զրաքարտութիւն է:

Ուզունլուկ մէջ ուր մինչդեռ զինւոր պահելու բնաւ պէտք չկայ, կարգ մը սրիկաններու զինւորական զգեստ հագնելով, գիւղերը կը դրկեն, ուր ամեն կերպ կեղեքումներ ի գործ կը դնեն: Ասոնք մինչև իսկ չոր հայ կարօտ տուններ մտնելով՝ համեղ կերպուրներ կը պահանջեն, հակառակ պարագային կը գանակուծեն և այլ և այլ տանջանքներ կուտան: Փախրացի Խալայեան կարապետը կտոր կտոր ըրած Ուզունլուկ և Զալապվերսի միջև: Պօտէր օղուու աշքատ ծերունիի մը այդին մտնելով աւերելէ յետոյ, երբ խեղճ մարդը կաշաղակէ, անմիջապէս վրան հաւաքւելով այն աստիճան կը ծեծեն, որ երկու օր վերջը կը մեռնի: Կառավարութիւնը, որ պատւոյ բոնաբարումը, կողոպտուսն ու սպանութիւնը, պատիկ ու անկարեսոր բան մը կը համարէ, արդիօք ի՞նչ կերպ ոճրագործութիւններ մտադրած է մեր մասին, որ իրեն մեծ երեւնայ: Մեզ լուսութեան դատապարտած են, մեր բողդանները անլսելի կը ման և միւս կողմանէ չարագործները կը կատղին, սոսկալի կերպով կը կատղին, ի՞նչ կեանք է այս...

Սէպէ-Չմէնց գիւղացի Պօղոս անուն երիտասարդ մը, որ երկաթագործութեամբ կը զեաղի, խոռվարաններէն է, ըսելով բանտ կը նետեն, ուր պատիւր կը բոնաբարեն հոն բանտարկւած մարդասպաններ: Խեղճ տղան չափաղանց զգացւելով այս բոնաբարումէն, կը խելագարի, որով կը պարտաւորին արձակել զինքը: Անկարելի չտեսնել ու չարտասւել այդ տղուն վրայ, որ Ուզունլուկ փողոցներուն մէջ կը թափառի յիմարական աղեխարշ շարժումներով:

Պէպէքէն, Փէօհրէնկ հարսանիքի կերթան կին մը, աղմիկ մը և այր մը: Ճամբան համանցի թուքերը վըրանին յարձակւելով, կուզեն կիներուն պատիւր բոնաբարել: Երիտասարդը, Անանեան Մանուկ, կը դիմադրէ: Թուքերը, զէնքը ձեռքէն առնելու նպատակաւ, դաւազանով զարնել կուզեն թէին. գաւազանը հրացանին

ձգոցին հանդիպելով՝ կը պայմի և գնդակը կերթայ թուքերէն մէկուն կը դիպչէ: Թուքերը կը յարձակին անզէն Մանուկի վրայ և, մեռնելու աստիճան բերելէ յետոյ, Ծաղիկին կուսութիւնն ալ կը պղծեն: Խնդիրը դատարան կինայ և Մանուկը, իբրև մարդասպան, 15 տարւան բանտարկութեան կը դատապարտի: Բժշկաց կողմէ հաստատւեցաւ, մէկ Ծաղիկին կուսութիւնը պղծւած էր, բայց բնաւ չփնդուեցաւ բըռնաբարողները:

Բուն Եոզդատի մէջ գիշերները գոլ պտտող ոստիկանները, Հայերը բռնելով բանտ կը նետեն, լապտեր ունենան կամ չունենան: յետոյ շատ մը ստակներ առնելով թող կուտան: Ասոնք կը բանտարկեն մարդ մը իր հետ գտնւող 14 տարեկան տղու մը հետ: Պահապանները կուզեն գիշերը բոնաբարել տղուն պատիւր: Գասպար անուն երիտասարը, զոր վերև յիշեցինք, կը դիմադրէ: Հետեւեայ օրը անոնք կարձակւեն: իսկ պահապանները Գասպարէն վուժ լուծելու համար, գիշեր ժամանակ տասնի չափ մարդասպան տաճիկ բանտարկեալներ զինելով վրան թող կուտան: Այս գազանները խեղճ տղուն ամեն կողմը վիրաւորելէ յետոյ, կը բռնաբարեն պատիւր: ասով ալ չբաւականանալով աւելի մը կապւած երկար գաւազան: մը կոխեն... և խելայել վիճակի մէջ թողլով կը մեկնին: Գասպար քանի մը օր յետոյ կը սթափի իր այս վիճակէն և ինդիրը դատարանին կը ներկայացնէ: Դէպէքը, յետ քննութեան, կը հաստատի բժշկեաց կողմէ: բայց փոխանակ պատժելու այդ ոճրագործներն ու զանոնք քաջալերող պահապաններն, ընդհակառակը Գասպարին և ընկերներուն մահւան կը դատապարտեն: Ահա բողոքին հետեւանքը...

Ասէ երկու շաբաթ առաջ Հեքազ գացող միւֆթին և հարստահարիչ Խալիլ պէյը ճամբելու համար երկու հազարի չափ սօֆտիաներ և հրոսակներ համախմբւեցան դրօշակին տակ, որոնք քրիստոնեաներու թաղերը պտտելով, բոլոր տունները քարեցին և շատ մը յարդիկ ալ վիրաւորեցին: Կառավարութիւնը ականատես էր ասոնց, լուսութիւն պահելէ զատ բան մը ըքրաւ: Խնդիրը էնիկուրուի անգղիական հիւպատուսին ականջը իյնալով վալիին կը դիմի, այս վերջինը նեղը մնալով թէկ քանի մը ձերբակալութիւններ ընել կուտայ, սակայն տարակոյս չունենք, թէ քանի մը օրէն ամենքն ալ պիտի արձակին:

Ահա հետեւանքը այն ազդեցութեան, զոր թողուց Մուսթափակա փաշա մեր նահանգին մէջ:

Ամեն կողմ աւել, կողոպտում, պատւոյ բոնաբարում, սպանութիւն կը տիրէ: Ի՞նչ կեանք...

ՆԱՄԱԿ ՕՐԴՈՒԹՅ

Օրդուկի շըջակայ հայաբնակ գիւղի մը մէջ զարհութելի գէպք մը պատահեցաւ: Յիշեալ գիւղի միւտիրը

քանի մը աղաներու հետ խորհուրդ կընեն ջարդել հայերն ու այս նպատակով հրաման կընեն տաճիկ գիւղացիներուն: Գիւղացիք, որ արդէն գրգռւած տրամադրութեան մէջ կը գտնէին վերջին ատեներու պատահած դէպքերէն, երբ վարչական պաշտօնաւորէ մը կը խրախուսէին, բնականաբար սանձարձակ կը սկսին իրենց շահատակութիւնները: Ուստի տեղյն տաճիկ գիւղացիք հայ ընտանեաց վրայ յարձակելով կսկսին աւերել պարտէզները, կոխկրտել հնձւած դաշտերը և թալանելով ու կողոպտելով հայերու ստացւածքներն, սուրերնին քաշած համարձակ, քար ու փայտով ալ կը յարձակին հայերուն վրայ: Խեղճ գիւղացիք սարսափած յանկարծական այս յարձակումէն, իրենց վիճակին անտեղեակ, անօթի ու մերկ, ոտերնին բորիկ, գլուխնին բաց, կը բարձրանան սարերը: Փոքր երախաներ մեծերնուն հետեւլով հակառակ լեռնային բիւրաւոր դժւարութեանց փշոտ ճամբաներն արհամարելով հետիուն: կը քաշին:

Խեղճ հայեր կը գնան միւգիւրին կը պատմեն իրենց ցաւերն ու վշտերը, բայց ապարդիւն աշխատանք. անշառ պաշտօնեան կաշառք կուզէ կորզել անոնցմէ, որոնք աղքատ ու անկարող չեն կրնար յագեցնել միւդիրի առաջարկը: Ուստի կուգան Օրդու գայմագամին դիմելով, կը պատմեն իրենց խորձակի վիճակը. բայց այդ դժւաղդ գիւղացիներու աղաչանք ու պաշտամնք անօգուտ կը լինին:

Օրդուցի քանի մը անձինք իմանալով մանրամասնորէն պատահած սոսկալի գէպն, կը խորհին հեռագրել Պոլսոյ անգլիական դեսպանին ու Պատրիարքին, բայց դժրախտաբար սոյն ձեռնարկ կառավարութեան արգելքի տակ չյաջողեցաւ: Հակառակ եղած դիմումներու, գայմագամը կը խոստանայ բռնել ու բանդարկել այդ մարդիկը և վնասները պետական գանձէն վճարել:

Կիւրակի առաւօտ մը կառավարական շատ մը պաշտօնեաներ սոտիկաններու ջոկատով մը կարչաւեն այդ գիւղը. տեսնելով գիւղի ամայի տեսարանը, որը անժխտելի կերպով կը հաստատէր եղելութիւնը վիաւած շատ մը տեղերը քններով, կը բռնեն մարդիկը ու կապւած Օրդու զրկելով անկէ ալ Տրապիզոն կը ճամբեն՝ հոն բանդարկելու համար:

Միւտիրը պաշտօնանկ եղած է. կառավարութիւնը սոտիկաններով լեցնել տւալ քաղաքս ու անյագաբար աչքը դարձուցած է տեղոյս: հայ հասարակութեան վրայ. միակ նպատակ՝ իրենց ծակ գրպանները լեցնելու համար է:

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՒՑ

Թող գիւղի դպրոցին քանդումը
Տրապիզոնէն Յ ժամ հետի Թող գիւղի հայերը ասկէ 2-3 տարի առաջ ձեռնարկած էին գիւղին գերեզ-

մանատան մէկ կողմը դպրոցի համար շէնք մը շինելու և այս տարի ալ կը լրացնեն զայն. այդ գերեզմանատան կից ունեցող կարգ մը մոլեւանդ կաթոլիկ հայեր գիւղացիներու այդ քայլը արգելք տեսնելով կաթոլիկ պրօպագանդայի, որուն համար իրենք հոն գըլոց ու եկեղեցի շինած էին և միւս կողմէ ալ գրգռւով կառավարչական պաշտօնեաներէ, կուսակալին բողոք տին ամսուս առաջները, թէ հայ գիւղացիներ առանց հրամանի դպրոց կը կառուցանեն և իրենց հողին անմանը անցնելով, մեր հողին վրայ անցած են. բռնաւոր կուսակալին ալ ուզածը այդ եր, ի՞նչ լաւ առիթ լուսաւորչականները և կաթոլիկները իրար ձգելու և պատճառով մ'ալ դպրոցը մէջ տեղէն վերցնելու. ուստի առանց օրինական ձևակերպութիւններ կատարելու, առանց քննելու, առանց Առաջնորդարանի իմացնելու, անմիջապէս զափիթիւններ կը զրկէ թոց դպրոցը քանդելու խիստ հրամանով 4 զափիթիւններ անկարող զգալով միայնակ գիւղ մտնել, շօջակայ Զիւտմէրա և ուրիշ գիւղերէ 20-30 թուրք հաւաքելով ապրիլ 12-ին ահագին հայ հույով մը կարչաւին գիւղը և գերեզմանատունը ուսնական ընելով մէկ երկու վայրկենի մէջ կատարաբար վրայ կառնին նորաշէն դպրոցը: Երեք մարդիկ չեն գտնւիր այն ատեն և քանդումը առանց միջադէպի կը վերջանայ:

Գիւղացիներու պահանջմամբ, Առաջնորդարանէն բողոքեցաւ այս անիրաւութեան դէմ, փաստելով, թէ եթէ նոյն իսկ շէնքին հողը Հասունեանի բեկորներուն ըլլար, կուսակալ մը իր բռնապետի գծած օրէնքով իսկ չէր կրնար Տէրէ պէյի պէս վայրենի հրամաններ արձակել: Կուսակալ կարևորութիւն չտւալ այս արդար բողոքին և սկսաւ զանազան ինտիրներ ալ հանել լուսաւորչական և կաթոլիկ հայերու մէջ այս ինտրի պատճառով սաստկացած ատելութիւնը աւելի ևս արմատացնելու:

Ինչ հիանալի տիպ կառավարչի մը, ի՞նչ արժանի գործակալ արինապեամ բռնապետի: մը ի՞նչ բացարձակ փաստ հառավարութեան ձիւաղյին ձգտութիւններու. քանդել դպրոց մը, մարել լուսաւորութեան դեռաբողբոջ վառարան մը, զլատել խեղճ գիւղացիներու ինքնազարդ գացման ուժը, ամեն տեսակ կեղծ ու ստոր միջոցներով գրուել, իրար սոսկալի ատելի թշնամիններ ընել երկու այլադաւան եղբայրներ, յայտնապէս քաջալերել թուրք գիւղացիները ամեն, անիրաւութիւններ, յարձակութիւններ կատարել հայերու դէմ. դա միայն անտանելի կերպով նեխւած թուրք մահամերձ կառավարութեան անձեռնամելի արժանիքն է:

Չատ, շատ աւելի ոճիրներ կարելի է սպասել գաղան ու կեղծաւոր պաշտօնեայէ մը, որ սուլթանէն շատ խիստ յանձնարարութիւններ կան հայերը զգմէլու և որուն նշանաբանն է ուտել, ուտել և ուտել...

Վեջերս Խնայի շօջակայ Գօրգմազլի անուն գիւղին մէջ կիւռճի գաղթական աւազակներ կը յարձակին հայի տան մը վրայ. հայերը իմաց կուտան մօտերը գտնւող պահապան զինուրներուն, որոնք կարծելով թէ աւազակները վրացիի հագուստով հայ յեղափոխական-

ներ են, անմիջապէս կը պաշարեն զանոնք և 2 կը սպանեն: Բայց ով յուսախաբութիւն, իրօք մահմեդական կիւռճիներ են եղեր սպանածները:

Այս ձախող գործին վրէժը առնելու համար, չենց միւս օրը գիւղին քահանան, մաւսթարը և մէկ քանի դիւղացիներ նւնա կը տանին, կը բանտարկին, պատրաւ-կելով՝ թէ դուք ալ մասնակից էք այդ աւազակներուն, բայց ադոր ալ ստութիւնը շրւտով երկան կենէ: Քանի մը օր վերջը փախչող աւազակները ուրիշ ընկերուու հետ գարձեալ կուգան նոր դիւղը և գնդակահար կսպանին Յ հայ և մի թուրք: Զինուրներ կը դրէւին աւազակները ձերբակալելու բանական բանական բանդարկւածները երաշխաւորութեամբ ազատ կը թողին:

Այս քաղքին սիւզարի Զաւուշին Ղարա Ահմէտ իր հետ առնելով երկու վատհոգիներ, Քէօքլուկ գիւղի Արիստակէս քահանային սպանալիքով 25 մէծէտ և 18 քիլէ ցործն կը կորզէ: Տ. Արիստակէս կը բողոքէ, բայց Ղարա Ահմէտ կը մնայ անպատիծ:

Խնայի մէջ ալ օրէ օր թուրքերը կը գրգռւին հայոց գէմ և ասենեւեցաւ, որ եթէ պատեհ առիթը ներկայանայ, պիտի կրնան կատարելապէս գլուխ հանել տեղին հայերը բնաջինջ ընելու գործը շնորհիւ վեհ սուլթանին:

ԱՊՈՏԱՄԵՈՒԹԻՒՆ ՄԱՍԻԴՈՒՆՑՈՒՄ

Մեր ընկերոջ հաղորդածը.

—Յունիսի 11 (Ն. ա. 23) գիշերւայ ժամը 11 և 30 ր. Աւրբաթ օրը Կրատովցի շրջակաբում՝ ապստամբները մօտ 45 հոգի, Դիմօ Դեադօտի առաջնորդութեամբ կուի ունեցան զօրքի հետ: Անյարմար դիրքի շնորհիւ նորքա կորցրին 2 մարդ: Բայց կարողացան դուրս գալ և այժմ յարմար գիրք ունին: Զօրքերը օգնութիւն են ստանում բացի դրանից նոքա գիւղերից դուրս են բերում բօլգարներին իրենց եղայրների գէմ: Գիշերը Պալանկայ բերին մի սայլ սպանւած և վիրաւուած զինուրներ:

—Յունիսի 13 (Ն. ա. 25): Վերջին լուրերը հաղորդում են, որ Դիմօ Դեադօտի խումբը, ջարդելով զօրքի շղթան՝ անցաւ գէպի Վարդար: Նոցանից սպանւած են 2 և 1 վիրաւուած: Զօրքից սպանւած են աւելի քան 30 հոգի: Սպանւած են նոյնպէս 17 հոգի բօլգարներից, որոնց կառավարութիւնը ստիպելով դուրս էր բերել իրենց եղայրակիցների գէմ: Վախենալով սրանց գէնք տալ, կառավարութիւնը տւել էր սրանց մահակներ:

—Նկօլի խմբից մնացել են 9 հոգի, բայց թէ որտեղ են, յայտնի չէ:

—Ենթադրում են, որ Երկրի խորթերում էլ ապրուամբութիւն է սկսել:

Բ. Ա. Յ Ն. Ա. Մ. Ա. Կ.

Հ. Ա. Զ Ա. Կ Ի Ա Խ Մ Բ Ա Գ Բ Ա Ի Թ Ա Ի Թ Ե Ա Ա

Զարդարներով կարգացինք Հնչակի թիւ 9 ի մէջ Կ Պարմէն թիւ կամ աման իրութիւն հանչակ եանները զարկած ըլլան զաւածան թիւթիւննեւքը, մինչ գեր Դաշնակցութիւնն կ Պարմայ կերպնական կօմիտէններէն, Պոհա ին ահարեկի հներուն ձեռքով ի գործ գրւեցաւ անոր մանւան վիրուր:

Զանդրալով այս կէտին վրան, Մէ Յեղափոխութեան ուսիսակէտն կարեւորութենէ խսպան զուրկ է յեղափոխան իան ո՞ր եւ է արարքի մը այս կամ այս կուսակցութեան ձեռքով կատարած ըլլալը, —ուս չափ միայն կուզնք յիշ ապա, որ թէ Պաշնակցութեան կ Պոհա կերպնական կոմիտէնն եւ թէ Հնչակեան կուսակցութեան Պոհի Մասնական Պահանջինն համար ու առաջարկութերը չեն կրնար ըլլալ երրէ քայլ օրինակ սխանները ու թիւթիմացութեանները: Աւսակի կը յասանք թէ Հնչակի խմբագրութիւնը պիտի փութայ իր սիստեմ ու զիւլու ստուգացոյն աղյուրներէ ասուած անմիջական տեղեկութիւններու:

Կ. ՊՈԼԱՐԻ ԿԵԴՐՈՒ ՍԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆՈՐԱՏԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԾ

Կ. Պոլսի կերպնական մնդուկի մէջ ստացեցան:

Մանիշակ քղ-էն Մեղու 45 դահեկան կարիճ 100 դահ, Արուսեակ 100 դհ, Ա. 20 դհ, Համ. 20 դ, Ար. 10 դհ, Հուր. 40 դհ, Բոց 20 դհ, Վուժ 40 դ: Օրէն 20 դահեկան:

Վիշապ քաղաքէն Սմբատեան խմբ. 100 դհ, Կս. 150 դհ, Արշակունեան 80 դհ, Քառո 10 դհ:

Նիզակ քաղաքի կերպնական մնդուկի մէջ ստացեցան:

Անյայտ 480 դահեկան, Յ. Յպ. 540 դհ, Յ. Յպ. 190 դահեկ:

Անդ. Կ. Երկրի Պ. Ա-ից 242 բուր, Ասդրօմից 180 բուր, 56 բուր, 44 բուրլի:

Աւրմից գաւառում, մի խումբ Ասորիններից 36 դրան:

Յիշեցնում ենք, որ ամսոյս 13-ին (Ն. ա. 25), լուսնում է Սասոնի Ապստամբութեան և Մեծ Կոտորածի միամեակը՝ Որօշակից եկող համարը ամբողջովին նւիրւած կը լինի մը, յեղափոխութեան պատմութեան մէջ այդ ամենանշանաւոր անցքին:

—○—

Թէկ ինչ ինչ պատճառներով ուշացաւ Տրապիզոնի նամակը, բայց և այնպէս հարկ համարեցինք նրան զետեղել այս համարում:

Դաշնակցութեան անծանօթներից Խոնդրում է Թղթակցութեան և Կիրատութեան համար ընթել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վեհապահ: Պաշնակցութեան սպասարան

ՅՈՐԴԱՀ

,ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ. Հ. ԲԱՐՁՐ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURE
LIBRARY

ՕԳՈՍՏՈՍԻ ՏԱՄԻԵՐԵՔ

ՍԱՍՈՒԻՆԻ

ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԻ

ՏԱՐԵԴԱՐՁԸ



ՍԱՍՈՒՆՑԻ ՎԻՌԱՎԱԾ

ՍԱՍՈՒՆՑՈՒ ՎԻՌԱՎԱԾ

Սասուն գաւառի Աէմալ գիւղացի տասն անձէ բաղկացած ընտանիք մը Էլինք, քիւրտերու հետ պա-

տերազմ ըրինք մը ինչքը և կեանքը պաշտպանելու համար իսկ երբ զօքքն միացաւ քիւրտերու հետ, մենք փախանք ես հօրս հետ էի, հայրս անօթութենէն ըլ կրցաւ փախչել, իսկ ես մտայ անտառի մէջ և ուշա-

գնաց եղայ. զօրքերը հայրս բռնեցին և թրով զարկին փորը դուրս թափեցին՝ մէջը վառօժ լեցունելով, այրեցին. վերջն ուրիշներու հետ գնացի, հօրս մնացած փըշրանքները և ոսկորները թաղեցի:

Մնացած ինն անձինքս 40 օր շարունակ անօթի քարերու և խիտ անտառներու մէջ մնացինք. խոտ կերակը, մինչև որ պոռացող ձայները դադրեցան, որ այլ ևս զմեզ չեխն հալածեր, իջանք մեր տեղերէն, Մուշ եկանք. հիւքիմաթը զմեզ զոկեց Մշց դաշտի Խիյակեան գիւղը, պյանտեղ փլած տան մէջ ձմեռը խիստ դառն նեղութիւններ կրեցինք, կերածներս կըլի՛լ էր, առանց կերակուրի. յրատէն և անօթութիւնէն հիւանդացանք, երկու աղջկէ և տղայ մը մեզմէ մեռաւ և այժմ մնացած 6 անձինքս, մերկ և անօթի՝ կը թափառինք գիւղէց գիւղ՝ կմակը դարձած:

Ս Ա Ս Ո Ւ

Ցուլիս ամսւայ վերջէն սկսեալ մինչ սեպտ. սկիզբը տաճկական զօրքն և աշերած քիւրտեր սկսան անխնայ սրով և հրով կոտորել զհայեր:

Նախ մինչդեռ Ծէնըք և Սէմալ գիւղացիք իրենց ոչխարներ և տաւարներ ամարանց՝ լեռը հանած կարածցնէին, Մուշ բնակող՝ վալքքանցի քիւրտեր, որ ասոնք ալ ամարանց ելած էին, յարձակւեցան Ծէնըք հայ գիւղի ոչխարաց վրայ և յափշտակեցին, որ հայ հովիւններ դիմադրելով և ետևնին ընկնելով, ոչխարներ յետ առին և երկու կողմէն ալ վիրաւորւածներ հղան:

Երկրորդ օր պաքրանցի քիւրտեր յարձակեցան Ծէնըքու և Սէմալ գիւղորէից վրայ ու սկսան կողոպտել ինչ և անսառներ. ասոնց ալ հայեր դիմադրելով գրեթէ յետս դարձուցին, և քիւրտեր փախչելով օսմանեան բանակին կը դիմեն, որ հայոց գիւղերուն մօտ էր. ողորմելի հայեր կարծելով, թէ օսմանեան զօրքը արդարութիւն ի գործ դնելով, պիտի օգնէր հայոց սակայն ի զուր: Յայնժամ օսմանեան բանակի զօրքը՝ միանալով քրդաց հետ, սկսան յարձակիլ հայոց վրայ և անխնայ կոտորել արքը, կանայքը և մանկուկը: Այն օր սկսան տանց միջի ամբողջ եղածներ կողոպտել և երկու գիւղն ալ կրակով վառել անսառներ տեղնել երկու գիւղի եկեղեցիներու մէջ. հայ կանայք լեցունել և պղծել և աղա սպանել և անոնց որովայնի միջի եղած մանուկներ հրացանի սիւնկիով հանել և սպանել, նմանապէս անկարող ծերեր և դըպ-

րոցի աշակերտներ բռնելով, վառւած կրակի մէջ լեցունել. իսկ մէկ մասն ալ փախչելով, ոմանք քարավէժ և ջուրերու մէջ ինկան մեռան. և շատերն ալ զօրքերու հրացաններով սպանւեցան. վերջապէս լեռներ ու ձորեր գիւղներով լեցւեցան, ոմանք ալ շնչասպառ հաղիւ թէ անկան անտառներու և քարերու այրերու մէջ ազատեցան:

Ուստի ասոնցմէ երկու անձինք բռնելով, տարին օմ: բանակի զօրապետին, որ զօրապետն երդմամբ յուսադրեց յիշեալ երկու անձինքը, թէ գնացէք, ձեր մընացեալ ազատւած հայեր բերէք, թող հպատակին և ազատին: Այս երկու հայ անձինք ելնելով լեռներ և ձորեր շրջելով գտան Տէր-Յովհաննէս բահանային և քանի մը հարիւր անձինք, որք սովոր և անօթութիւնէն ուշաթափակ եղած էին, համոզւեցան. և Տէր-Յովհաննէսի հետ բանակը երթալով, անձնատուր եղան: Եւ երբ բազմութեամբ բանակը հասան, սպարապետ հրամայեց կապել կապանօք և ոմանց ձեռք բրիչ տալով խոր հորեր փորել Տէր-Յովհաննէսի աչքեր սրածայր դանակով կը հանին և ապա կը գլխատին. նմանապէս բոլոր կապեալներ հրացանի սիւնկիով սպանել, հորի մէջ լեցնել և ձորակի ջուրի հետ նետել և շատերն ալ կտրատել, շրուներու առաջ լեցունել և գազանաց ուժունոց կերակուր ընել և այլն:

Եւ ապա յարձակեցան Կէլիկուզանայ և 48 գիւղերու վոայ մինչև ի Դալվորիկ գաւառը, բոլոր գիւղերը կրակով վառեցին, որոց մէջ թէ եկեղեցի քանդեցին, մեծաւ մասամբ, 6 գիւղի դպրոցները այրելէն զինի աշակերտներ և վարժապետներ ալ սպանեցին և ցիր ու ցան ըսին: Յիշեալ գիւղերու ժողովրդոց թիւ 36,000 կը հասնի, յորոնցմէ հազիւ թէ 2000 փախտական ազատւեցան և այսօր գաշտիս Մշց գիւղութէից մէջ և լեռներ կը թափառին. և շատերն ալ մերկանդամ և անօթի կը մեռնին, ուստի թէ ապրողներուն և թէ մեռնողներու թիւը յականէ յանւանէ տալ առ այժմ չի գիտցիր:

Ցուցակ աւրած գիւղերու.

1 Ալիանցիք	25	տուն
2 Ալչեկ	7	"
3 Դուշտօք	12	"
4 Ծէնըք գիւղ	40	" 2 եկեղեցի, 1 դպրոց
5 Մզիէսորիք	15	"
6 Դափէ	10	"
7 Կլընկիման	20	"
8 Պապճանց	8	"
9 Սէմալ գիւղ	50	" 1 եկեղեցի, 1 դպրոց

10 Միւս գաշտոք	8	"
11 Պլյարտեր	10	"
12 Պօնէէ	20	"
13 Կըուէ՛ըսար	10	"
14 Մերկիր	8	"
15 Խոշոք	12	"
16 Կէլիկուզան գիւղ	80	" , 1 եկեղեցի, 1 դպրոց
17 Կլիսան	8	"
18 Հիւսենցիք	30	"
19 Միիթար	15	"
20 Խարիպշան	13	"
21 Խտան	20	"
22 Երկու աղբի	60	" , 1 եկեղեցի, 1 դպրոց
23 Թիմիկ	7	"
24 Կըղէռը	4	"
25 2 Հիթինք	70	" , 2 եկեղեցի
26 Նոնոց		
27 Դալվորիկ գիւղ	60	" , 1 եկեղեցի, 1 դպրոց
28 Զորեր	15	"
29 Սպահանք գիւղ	50	" , 1 եկեղեցի
30 Հարթք	45	"
31 Հունուտ	15	"
32 Փուրիս գիւղ	50	" , 1 եկեղեցի
33 Խլչովիտ	40	"
34 Տըվալինք	40	" , 1 եկեղեցի
35 Հըւօղինք	50	"
36 Եղկարտ	30	"
37 Մերկիր	25	"
38 Հըրթիոյ	35	" , 1 եկեղեցի
39 Քօրախոյ	40	"
40 Հումանք	15	"
41 Մըզօայ	35	"
42 Իշխանձոր	40	" , 1 եկեղեցի, 1 դպրոց
43 Խըզրկու արտեր	45	"
44-45 Սկիթ և Կոանոս	65	" , 1 եկեղեցի
46 Ընկուզնակ	50	" , 1 եկեղեցի
47 Խաչուկներ	20	"
48 Արտկոնք	40	"

Մ Ի Տ Ա Ր Ի Ւ

Ուղեղ մի տարի է, երբ քաջարի սասունցին կրկին պարզեց յեղափոխական դրօշակը, երբ Սասունը, ամբողջ Սասունը, գրեթէ անպատճաստ, կուի դաշտ դուրս եկաւ՝ իր դիմացն ունենալով հազարներից բազկացած

կանոնաւոր հետեւակ և հեծեալ զօրք, թնդանօթներ և քրդեր տասներակ հազարներով:

Այս, ծիշտ. մի տարի է, երբ անվեհեր Սասունը թէ-
և շրջապատւած չորս կողմից թնդանօթներով, կար-
կտահար էր լինում ոռոմբներով և գնդակներով, բայց
և այնպէս կարողացաւ յետ միել մի ահագին բանակ,
հարւածել, մեծ կորուստներ հասցնել նրան: Ամբողջ 18
երկար ու ձիգ օրեր՝ Յուլիսի 27-ից մինչև Օգոստոսի
13-ը սասունցիք՝ միացած, առիւծ կորած, հար-
ւածի հետևից տալով, թոյլ չտւին թշնամուն մուտք
գործել երկրի ներսը: Թշնամին շփոթւած, ապշած, ի-
րարանցման մէջ է քիւրդերը փախչում են, զօրքը թշն-
ամոնօթներով նրանց յետ է մղում գէպի պատերազմ...
18 օր Սասունը յաղթութիւն յաղթութեան հետևից
է տանում, կոտորած կոտորածի հետևից հասցնում,
աւասն և ութ օր անընդհատ:

Զօրքերի հրամանատար նենդամիտ փաշան մի
ուրիշ միջոցի է դիմում. դադարեցներով կոխւը, նա բա-
նակցութեան է հրակիրում սասունցիներին: Հացի,
ուզմամժերքի պակասութիւնը, կատարեալ բացակա-
յութիւնը հարկադրում է մեր քաջերին ընդունել այդ
առաջարկութիւնը: Հարկաւոր է լինում պատգամաւոր-
ներ ուղարկել ընտրում են 184 ներկայացուցիչ: Մինչ
այս մինչ այն յանկարծ թշնամին ներս է խուժում ա-
նառիկ երկիրը: Սասունցիք միայն այժմ են նկատում
իրենց գործած սխալը, բայց արդէն ուշ էր

"Յուսահատ և ահեղ կոխւ կը ծագի, դաշըննե-
րով, սրերով և նաջախներով, կուրծք առ կուրծք:
"Լեռնանման դիակներով կը ծածկի դաշուը: Կը տես-
սնէ գըրգօն ծերունի մը, որ թեւերը քաշած, դամաս-
սիեան ահեղ խենջարն ի ձեռին իրարու հետ դիակ-
ներ կսփռէ. և անընհատ կառաջանայ. անոր ետևէն
նկերթայ. իւր որդին, գայթելով. դիակաց մէջ և աղա-
ղակելով. ու Հայր, Հայր, քաջազունք այսպէս կոստնուն
դիակաց վրայէն": Անոնցմէ ոչ մի չի ձերբակալւիր, ոչ
ոք կուէն խոյս չի տար, այլ ամենքը կընդունեն նա-
հատակի պատկը՝ արեամբ ներկաւած, եւապատիկ թըշ-
նամիներու հոգիներ իջեցնելով ի թափս դժոխոց":

Սկսում է կոտորածը, տմարդի կոտորածը: Բայց
սասունցիք յետ չեն նահանջում, այր և կին աներկիւդ
դիմում են կոտորած: Կանայք կուում են քարերով և
խենջարներով: Գազան զինուորները մորթում են անմեղ
մանուկներին, դիակները ճօճում սիմների վրայ: Թըշ-
նամօթների պայթումը, երեխաների ճիչ աղաղակը դը-
ղբացնում են ամբողջ երկիրը: Շփոթ, իրարանցում,
կատարեալ դժոխոց: Մի տեղ անասելի չարչարանք,
տանջանքներ են կատարում զինուորները, մի այլ տեղ

կանայք ժայռերից իրենք իրենց անդունդն են նետում, որ ընկնեն բիրտ զինորների ձեռքը, որ չանպատեն իրենց անարատութիւնը:

Ամբողջ 10 օր՝ Օգոստոսի 15-24-ը տեղում է այս կոտորածը: Կոտորում են անխափի բոլորին, գաղանային տանջանքներ, շիկացած երկաթի կաթսաներ, ցցեր... Այս մեկը յիշենք, երեակայել հարկաւոր է այն սարսափների տեսարանը...:

Ճիշտ մի տարի է անցել այդ ժամանակից:

Ի՞նչ եղաւ այս մի տարւայ ընթացքում:

Երբ այդ գաղանութիւնների լուրը յայտնի եղաւ եւրոպայում, մամուկի լաւագոյն մասը միաձայն բողոքեց սուլթանի կառավարութեան դէմ: Աերջինս սկսեց հերքել իրողութիւնը, յեղաշրջել փաստերը: Մամուլը զայրացած պահանջեց եւրոպական պետութիւններից միջամտել: Նրանք հասարակութեան և մամուլի միահամուռ պահանջների ճնշման տակ միջամտեցին և... ուղարկեցին կոտորածի տեղը մի քննիչ յանձնաժողով: Մամուլը, անկաշամ մամուլը դրանով չքաւականացաւ, սեփական թղթակիցներ ուղարկեց երկրի խորքերը: Այդ անձնուրաց մարդիկ վտանգի ենթարկելով իրենց կեանքը, մը տան ծածկահայաստան, իրենց ընդարձակ յօդւածներով երեան հանեցին սուլթանի կառավարութեան ձեռքով կատարած: և կատարող քստմելի գործերը: Քաղաքակրթւած երկիրների հասարակութիւնը ապշում, զայրանում է: Միտինդներ են տեղի ունենում: Ընդլայում և Ամերիկայում: Պետութիւնները կազմում են բէֆօրմների մի ինչ որ ծրագիր, որը տաճիկ կառավարութիւնը մինչև օրս չի կամենում նշն խակ լոկ խօսքով ընդունել...

Դիպլոմատիայից օգնութիւն սպասող հայերի յոյը սերը ի դերեւ անցան:

Իսկ մինչ այդ ապստամբւած ժողովուին մի այլ չարիք է վերահանում: դա սովում է: Ոմանք գաղթում են զանազան երկիրներ, մասցածներից սովում է զոհեր տանում: Եւ այսօր շատ շատերը՝ կմախք դարձած, տեղերում են Տարօնում և Կարին, օգնութիւն հայցում իրենց թշւառ եղայրներից:

Ճիշտ մի տարի է անցել մեր յեղափոխական պատմութեան այդ նշանաւոր մօմենտից յետոյ: Բայց յուսահատական չէ նա՝ այց ժամանակամիջոցը ճիշտ է, մեծ զոհեր տւինք, հագին, անփոխարինելի կորուսաներ ու նեցանք, բայց Սասունի ապստամբութիւնը մեզ համար մի նոր դարագլուխ է բանում: Նա ահագին զարկ տեղ յեղափոխական գործին, սթափեցրեց ամբողջ ժողովուրդը, էլեքտրականացրեց նրա բոլոր դասերը, նորից, բայց աւելի ուժեղ՝ կենդանի չտեսնեած շարժում առաջ

բերաւ: Օր օրի վրայ աւելանում են յեղափոխական կօմիտէները, սփուռում բուն երկրի զանազան անվիւնները: Կազմում են նոր և նոր հայդուկային խմբեր տեղափոխում, ընդհարումներ, հրոսակային ճակատամարտներ զօրքի և քրդերի հետ, ժողովրդային ցոյցեր, նշանաւոր մատնիչների, ոստիկանների սպանութիւններ յեղափոխական տերրորիստների ձեռքով:

Այո՛, Սասունի ապստամբութիւնը և կոտորածը զարթեցրին ամբողջ ժողովուրդը դարեւոր թմրութիւնից: Խուր սկսած է և նրա յաջող ելքը մեր իւրաքանչեւրիցն է կախած: Հեռի մեզանից դիպլոմատիան, մենք նրանից սպասելիք չունինք: մեր յոյսը մեր բազուկների վրայ գնենք և կումենք:


Կուենք յանուն դարերով հարստահարւած ժողովրդի:

Կուենք յանուն Սասունի անմահ հերոսների:

Կուենք՝ ցցերի վրայ հանած անմեղ մանկանցը վրէժինդիր լինելու:

Կուենք բունաբարւած, ապա բարբարոսաբար նահատակւած մեր մայրերի, մեր քոյրերի ոտնակոխ արած պատի համար.

Կուենք ստրկական շղթաներով կաշկանդւած, սուլթանի լծի տակ հեծող ժողովրդի ազատութեան համար:

Կուենք, կուենք մինչև մեր վերջին շունչը: Կամ մահ, կամ ազատութիւն: 

Ա Զ Ա Ց Ո Ւ Թ Ի Ի Ւ Կ Ա Մ Մ Մ Ա Հ

Այս է բոլոր յեղափոխականների գէվիզը, այս է և մերը, ազատութիւն կամ մահ, այս է միակ պատւոր կեանքը և այս ենք մենք պահանջում:

Մենք պահանջում ենք տիրող բռնակալութեան ոչնչացումն և մեր մարդկային իրաւունքների յաղթականը: և գրա համար մենք կուում ենք, դրա համար հայ ժողովուրդը սկսել է արիւն թափել իւր հայրենիքը ներկել իւր որդկերանց արիւնով:

Հայ ժողովուրդը դարեր է, որ շլինքը ծուած փշող ապահովութիւն մեռցնող բռնակալի լծի տակ, տանում է դժոխային կեանք: դարեր է, որ նա զրկւել է իւր մարդկային իրաւունքներից: և ծառայում է իւր մի բռնակեր անասուն, դարեր է, որ նրան կեղեցում, անպատւում, սպանում են, դարեր է, որ նրան

ոտի տակ տւած կոլսկըռտում են և ենթարկում լիրք ու լպիրջ կոպտութիւնների ծաղօի ու ամեն տեսակ տանջանքների: Այլ ևս ոչինչ չեմացել նրա համար մաքուր, սուրբ և անարատ, — նրա բոլոր զգացմոնքները բռնաբարւած, ոտի տակ են տւած, նա ստորացրւած է բարոյապէս: Իւր ամբողջ էութեամբ, իւր արտաքին ու ներքին աշխարհով նա չի պատկանում իրեն, այլ անամօթ, անպատկառ բռնակալին:

Այս հայ ժողովուրդը իւր էութեամբ բռնաւորի սեփականութիւնն է, և նա դեռ ապրում է, տանում է այդ կեանքը: Ապրել բռնաբարւելու համար, ապրել տանջւելու ու անպատւելու համար, ապրել ստրկական շղթաների: մէջ խեղուելու համար, ամօթ է:

Ո՞չ, հայ ժողովուրդ, ոչ, բաւական է: Ժամ է սթափւելու, ժամ է: Հալրտելու ստրկական լուծը և փրսելու բռնակալի շղթան:

Ազատութիւն կամ մահ, այս են պահանջում: Քո մարտիրոսները, քո ազատութեան համար նահատակած հերոսները, այս է պահանջում և հերոս Սասունի հերոս որդիքը, նրա հազարաւոր նահատակների արիւնը որոնք զուեցին դրա համար, այս է պահանջում աւերակ դարձած և արիւնով ներկւած Սասունը:

Ահա լրանում է միամեակը այն սարսափելի արմարդ կոտորածի, որ տեղի ունեցաւ անցեալ տարի Սասունու: Այս ամիսներումն էր, որ Սասունը խելտուած էր հրացանների ու թնդանօթների միջ այս օրերումն էր, որ Սասունի կանաչ ու ծաղկաւէտ բնութիւնը ներկւել էր իւր քաջ զաւակների արիւնով, այս ժամանակամիջոցումն էր, որ թնամին սրի ու հոռի էր բռնել ամբողջ Սասունը — այլում, կոտորում էր... և հպարտ ու հսկայ Սասունը ընկաւ... ու որբացաւ իւր սիրասուն զաւակներից:

Ու ամբողջ մի տարի է անցել այդ օրւանից և մէկ չենք սրբել այդ արատը, մէկ դեռ վուժեմնդիր չենք եղել: Մէկ արտայայտել ենք մեր զայրոյթը, մէկ ցոյց ենք տւել թնամուն մի քանի դործողութիւններով, որ մէկ շարունակում ենք կուրու, որ մէնք զինաթափ չենք եղել և չենք լինիլ: Բայց այդ չէ:

Այդ արատը կը սրբի այն ժամանակի երբ ջարդած, փշուած կը լինին թնամու ստրկական շղթաները, երբ նա դուրս քշւած կը լինի մեր հայրենիքից և երբ Սասունի արիւնու լինուերի վրայ կը ծածանի ազատութեան դրօշակը:

Մինչդեռ չեայ, այդ, մինչեռ Սասունը մում է աւերակ, որդիկը ցիր ու ցան և Հայատանի հողի վրայ թագաւորում է, սութանական բռնակալ կառավարու-

թիւնը այդ արատը կը մայ և մէկ միայն արժանի կը լինինք ազգերի արհամարանքին ու զզւանքին...

Իսկ այդ արատը կարելի է սրբել այս նշանաւոր տարեդարձին դարձեալ կրկնենք, միմեայն յեղափոխութիւնով:

Հայ ժողովուրդ, յեղափոխութիւնն է միակ ձանապարհը քո ազատութեան, յեղափոխութիւնն է, որ քեզ կը տայ քո բաղձածը՝ ա զատ երկիր, ազատ մարդ:

Համոզւիր դրանում, համոզւիր, որ մինչև աւերութիւնների չենթարկես թշնամու հիմարկութիւնները, մինչև տերրօրի չենթարկես նրա ամեն տեսակ պաշտօնեաները ու ամեն տեսակ կեղեքիները, մինչև արիւն չոսկես, չկայ փրկութիւն...

Յոյսդ մի դնիր շահասէր դիպլոմատների և ոչ եւթիու պոռտամախօս ու պօլիտիկան ազգասէրների վրայ. յոյսդ դիր քեզ վրայ, քո բազուկների վրայ:

Ենոք առւր յեղափոխականին, թիկնակից եղիր, ամուր սեղմեիր նրան և կուիր կուիր յանուն քո նահատակների, կուիր յանուն ազատութեան.

Բաւ համարիր դարերով կրածդ ստրկի կեանքը, բաւ համարիր կոտորածը, անպատութիւնը, կեղեքումը, թալանը բռնաբարութիւնը, լկումը...

Տանեակ տարիներ է, որ քո որդիկը բարձրացրել են յեղափոխական դրօշակը, մտիր այդ դրօշակի տակ, ամուր սանիր նրանից, դա է քեզ վրկողը, կուրծք տուր թնամու գնդակի առաջ, թող արիւնդ հոսէ, այդ է քեզ վրկելու:

Թնամու գնդակով վիրաւորւած և արիւնու կուրծքը է, որ կը պաշտպանէ քո պատիւը, դրանից հոսած արիւնը կը խեղտի թնամուն և քեզ կը բերի կեանք, եթէ վէրքը մահացու է, դու կը մեռնիս, բայց պատուաւոր, հերոսական մահով. պատիւ քեզ:

Ազատութիւն կամ մահ, կրկնենք այս արիւնու տարեդարձին և ոգեղուած տասնեակ հազար մարտիրոսների հերոսական մահով, աւելի հաստատուն և վճռական քայլերով գնանք դէպի կուիր, դիմենք դէպի մեր կէտանպատակը:

Կամ ապրինք իբրև ազատ մարդ, կամ մեռնինք հերոսական մահով:

Ազատութիւն կամ մահ, ահա միակ ելքը, ահա միակ պատաւոր կեանքը:

յունու

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՇՎԵՅՑԱՐԻԱ

(ՄԻ ՇՎԵՅՑԱՐՈՒՀՈՒՑ)

Հայե՛ր,

Ձեզ եմ դիմում այս տողերով, որ նւիրած են մի տիկուր և վշտալի տարեդարձի, տարեդարձ, որ լի է խրախուսանքով և վեհ, ազնիւ օրինակներով։

Մի տարի է, ճիշտ հենց այս օրերում, մի սարսափելի կուռվ արիւնոտւեց ձեր սիրուն երկիրը։ Ձեր բարբարոս իշխող՝ չքաւականանալով կեղեքել կողոպտել, բռնութեամբ խլել ձեր ունեցած չունեցածը, ձեր արդար աշխատանքի պտուղը, ձեզ ձգեց անամօժ, տմարդի (lâche) մարդասպանիրի ճիրանները։

Դուք կուցեցիք քաջութեամբ, բայց ընկճեցիք թըշնամու քանակութեան առջեւ։ Թո՞ղ, այս անկումը ձեզ փշրելու և վհատեցնելու փոխանակ, ձեզ ներշնչի նոր ոյժ, նոր եռանդ։ Աիշելով այն արիւնոտ օրերի թշւառ զոհերին, երդւեցէք վոէժինդիր լինել երդւեցէք, ինչպէս նրանք, կուել ցմահ ազատութեան սուրբ գործի համար։

Յիշեցէք, որ մեզնից դարեր առաջ, ինչպէս և հենց վերջերս՝ մեր օրերում, ուրիշ ժողովոդներ՝ նոյնպէս տանջւել հեծել են։ Ուժեղները միշտ հարստահարել են թյութիւն։ Բայց և նոյնպէս միշտ՝ թյուերը կուել են ձեռք բերելու իրենց ազատութիւնը։

Շատ վաղուց է, մի երկրում, որ պյում կոչւում է Շվեյցարիա, որը այսօր քաղաքակրթւած, ծաղկած է և որը մի ժամանակ վայրենի էր, ապրում էր աղքատ և սակաւաթիւ ժողովուրդ, բայց լի արիւնթեամբ և եռանդով։ Ինչպէս դուք, նա էլ է եղել Ճնշւած ուժեղ իշխողի լծի տակ, որ և նրան հարստահարում էր։ Այս փոքրիկ ժողովուրդը որ բաղկացած էր խեղճ լեռ, նականներից և պարզակեաց հովիւներից, հեծում էր այդ կապանքների տակ։

Մի քանի մարդ հաւաքւում են և հանդիսաւոր կերպով երդւում՝ տալ իրենց կեանքը իրենց անկախութեան համար։ Այդ երդման լուրը կայծակի արագութեամբ տարածւեց սարից սար։ Եւ հենց որ բոլորը առին այս լուրը, թողին իրենց ընտանիքը, աները, իրենց ունեցած չունեցածը, խմբւեցին՝ միացած կուելու։

Այս մի բուռը մարդիկ՝ միացած ամուր կապերով, ուժեղացած համերաշխութեամբ ու ընդհանուր հեծանքով աշքերը յառած իրենց սուրբ դէվիզին՝ „Մէկը ամենի համար, ամենը մէկին, կուի գաշտը գուրս եկան՝

մէկը տասի դէմ, և բազմաթիւ ընդհարումներից յետոյ, նրանք յաղթեցին ուժեղ և կարող թշնամուն։ Եռանդի ուժի, մանաւանդ տոկունութեան շնորհիւն է, որ նրանք կարողացան իրենց իրաւունքի յաղթանա։ Կը տանել, և նոյն տոկունութեան, համերաշխութեան շնորհիւն է, որ շվեյցարացիք կարողացել ենք պահպանել մեր ազատութիւնը, որը աւելի թանգ արժէ, քան մեր կեանքը և որը ձեռք է բերւած սուր ի ձեռին։

Հայե՛ր, թող այս ևս օրինակ լինի, հետևեցէք նըրանց եռանդին, եղէք միացած ինչպէս նրանք, մի նահանջէք ոչ մի դժւարութեան, խոչընդոտի առաջ և դուք կը յաղթէք։

Այդ յաղթութիւնը գուցէ ձեզ թանգ նստի, ինչ հոգ, համարձակ դիմոցէք ձեր կէտանպատակին։

Ձեր վիճակը ամին տեղ համակրութիւն է գրաւում, գուք ունեք բազմաթիւ բարեկամներ, ձեզ հետ են նոյնպէս և նրանք, որոնք ատում են անամօժ հարստահարուն և սրանց թիւը մեծ է։ Ամեն կողմից աչքեր են յառած Հայաստանի վրայ, ձեր բոլոր բարեկամները յոյս են դնում ձեզ վրայ, նրանց յոյսը ի դերև չհանէք։

Յիշեցէք ձեր քաջարի նախնիքը, որ ապրել են այդ հողի վրայ ազատ ու հպարտ և որի վրայ դուք այսօր ապրում էք կոր ի գլուխ։ ասացէք քաջութեամբ ինքներդ ձեզ՝ որ նրանց որդիքը այլ ևս չեն կարող երկար ժամանակ մնալ ստրուկ և որ աւելի լաւ է մեռնել։

Ձեր առջեւը դուք տեսնում էք դակացած և արիւնոտ դէմքերը Սաստինի սուրբ մարտիրոսների, որ կոչում են՝ „Եռանդ և վրէժմ“։ Լսեցէք նրանց և եղէք հաւատացած, որ անկումը յաղթութեան կը փոխւի։

Courage, Arméniens!

ԵՐԿՈՒ ՏԵՍԱՐԱԿԻ

Ծագել է արփին, աշա սէգ Տաւրու՝ իբրև փրկութեան նորագոյն փարոս, Վաղորդեան լոյսի ճաճանչների տակ ՊՃՆԱԶԱՐԴԱԿՈՒՄ է ուրախ, համարձակ։ Եւ ինչ թարմ իդձեր, ընչ յոյս կենսաբեր Գիտեն աւետել շոշողուն լանջեր... Անտեղ չէ փայլում ոչ մած, ոչ գութան, 2է հնչում դիւթիչ սրինգ հովական։ Ազատ տաւրոսցին, լերան քաջ որդին Թողել է հանդը, հոգսը ապրուստին։ Այրում են իւր տուն, այրում է իւր դէզ,

Ապացած է գործի մի այլ ասպարեզ:
Անմերձենալի ժայռերն անտառուտ
Եւ կամ լեռնային ծերպերը թփու
Հեն աչաբեկում վայրի եղջերուն,
Հէ ոտնակոխում նախիրն երերուն.
Մարդկային խմբեր են վիստում այնտեղ
Առած սուր-սուսեր և հրացան աշեղ:
Սպառազինւած նրանք շարիշար
Ծածկում են Անդոք՝ անառիկ մեծ սար.
Ներկայ է այնտեղ և մանուկ, և ծեր,
Պակաս չէ նաև սէմալցէ տէր-տէր.
Նրա շրթունքի վրայ լուռ ու մունջ
Շարժվում է աչա աղօթքի մրմունջ:
Ապա լեռնցի կարիճ հայուհին,
Օ՛ նա դաւաճան չէ իւր օջախին,
Անքաժան ընկեր է իւր ամուսնուն,
Նա չի մոռանայ աննման Սասուն:
Անդոքայ սարից Գըրգօն անձնւէր
Հայեացքն ուղղում է դէպ Փըռ-Փըռ քարե
(Այնտեղ, ուր Մուրադ գտաւ ապաստան,
ՎՃռելով ցմահ մմալ անսասան),
Ապա հոլանի բազուկը մեխնած՝
Խրախոյս է կարդում նա ոդեռուած.
Ո՛ Տեծահոգութեամբ կուենք միշտ արթուն,
Լինենք, ով քաջեր, անվախ աննկուն.
Կամ կը վաստակինք ազնիւ յաղթանակ,
Կամ կը պսակենք իբրև նահատակ...
Քարակոյտերով պարփակուած Շէնիկ
Եւ անմակնելի գիւղը Դալորիկ
Ցղում են իրար զերմ սիրոյ բարե,
Մաղթելով միմեանց նոր օր, նոր արե...
Մթափւեց բնութիւն, սթափէ Տարօն,
Կազմ ու պատրաստ է համազդային տօն.
Աւհանձն աւիւնով վառւած սրտեր հաշտ
Դիմում են ցէպի կռւի, արեան գաշտ:
Լսում է աչա փողերի հնչիւն,
Պատռում է օդը սրերի շաշիւն.
Սասունն անլեյներ, Սասուն միայնակ
Տանում է մարտի յաղթական դրօշակ...

Սաւարեց արփին... և այժմ հէտ Տաւրոս,
Աւաղ, չէ՞ այլ ևս փրկութեան փարոս.
Մարող շողերի ազօտութեան մէջ
Նա սուգ է կապում, անպատում, անշէջ:
Ի՞նչ ճնշող մոքեր, ի՞նչ վիշտ մահամեր
Գիտեն պատճառել սգազգեաց լեռներ.
Նրանց մոռայլոտ լանջերին փոռւն
Գերեզմանային պաշարել է քուն,
Ուր չէ փողփողում առկայծող լըսը,
Ուր փշրում է կենսատու յըսը...
Այնտեղ կուսական խիտ մացառներում
Անմահ տաւրոսցին էլ պահ չէ դնում,
Իւր շըահայեաց աչքերովն անթարթ

Թշնամիներին հիւսելու թակարդ:
1. Եռնային հսկայ ծերպերը սուր-սուր
Որբ են մնացել դարձել են թափուր...
Բաղդով համակից երկու մեծ գիւղեր—
Շէնիկ, Դալորիկ տոկուն ամողներ—
Խղել են սրի և հրի ճարակ,
Ընկել կործանել են հիմնայատակ:
2է լսում այնտեղ կենդանի մի շունչ,
Լուռ է ամեն ինչ, անձայն, անմռունչ.
Զոհւած գիւղերն արինաթաթախ
Կուտուել են չորս կողմի անտէր և անթաղ...
Միայն աւերակ զոյգին դէմ առ դէմ,
Երբ կանգ է առնում լուսին թալիադէմ,
2է զլանում այդ մեռեալ կցատերին
Իւր ցուրտ շողերից հանելու բաժին...
Անդոք լեռների ցից ժայռերը մերկ
Ժածկում է մի թաց սաւան կարմրաներկ,
Թշւառ զոհերի արեանն է այդ ծոր,
Որ ողողում է, թրջում սար ու ձոր.
Եւ այդ արինով մոլի թուրքն ու քուրդ
Իրենց պիղծ կրքին տալիս են յագուրդ...
Իւր ընկերներով Գրագօն անարգել
Շարունակում է թէև մարտնչել
Քայլց փրկութեան յօյն արդէն չքացաւ,
Նա էլ կիսամեռ գետին փութցաւ...
Մոայլեց բնութիւն, մոայլւել է Մուշ
Պատել է նրան թանձրամած մշուշ:
Սասունը սոված, Սասունն անպաշտպան
Քաց թողեց ձեռքից դրօշակ յաղթական:
Նա այժմ յուսահատ դէս ու դէն դարձած
Աղաղակում է. „Տեւեցէք ինձ ՀԱՅ...“

զովրի երջանկւսթեան, բարեկեցութեան՝ համար գիշեր ու ցորեկ աշխատի, տքնի ա'յնպիսի մէկը, որ իւր մարդնաւ կան ու հոգեկան ամողջ կեանքը նւիրած է իւր հարեւ մանոցի չքնաղ հուրիսներուն... Եւ այդպիսին հասկնայ ժողովրդի վիճակը՝ ի՞նչ դառն հեգնութիւն:

Բայց եւ ամսպէս նա քաջ հասկցաւ, թէ հայ ժողովրդի բողոքող ձայնը իւր գէմ ուղղաւած է ու իրեն պիտի վնասէ, հետեւաբար եւ իւր հանգստութիւնը վրդովող այդ անախորժ, փոթորկալից ձայնը ուզեց մարել, խափանել իսպառ:

Ահա ուղևթանի կառավարութիւնը նախ զժողոային բարբարոսութեանց սոսկալի շարքով մը հալածեց յեղափոխականները, ի՞նչ հետեւանք տեսաւ ո՞րչափ որ իւր ոյժը աւելցուց կմն ի վեր կործանելու Հայկական շարժման չէնքը, այնտեղ աւելի մհծացաւ, ընդարձակեցաւ ատիկաւ կոահեց ուրեմն, որ ասոր վախճանն ալ պիտի կրնայ ըլլալ պալքանեան ազգերու ապստամբութեանց հետեւանքին պէս, ասոնք ալ զի՞նք պիտի անդամանատին. երթէք, բնաւերթէք Բոնակալը նախարարներուն հետ կը խորհրդակցի երկար ատեն եւ վերջապէս կը յղանան բնաջինջ ընել ամբողջ հայ ազգը՝ թէ անտեսական ճնշումով եւ. թէ սուրով.

(«ալ ո՞վ պիտի մնայ ընդվզող»), կը մտածէ՝ արիւնարրու-
հրէշ Համիղը։ Այժմ կը մնայ միջացի վրայ խորհիլ, ան ալ
հետութեամբ գտնոն. եւ ի՞նչ արմատական միջոց — արիւ-
նախում քուրդերը զինել ու ձգել հայերուն մէջ, տայրվ
իրենց լինազօրութիւն ամևն միջոցների դիմելու, կը բաւեր,
որ հոն հայ չի ողողու. Սքանչելի՛ եւ հանճարե՛ լ լողացում
Անմիջապէս այդ հրաշալի գաղափարին գործադրութեան
կը դիմեն. Քուրդերը կը զինւն միատէմու, կը զրբի անոնց
մեծերուն փաշայութեան, զօրապետութեան աւտիճաններ,
ընծաններ կը թափին անոնց բոլորտիքը, եւ ի մեծ ուրա-
խութիւն Աւազակապետին, անոնց գործադրութեանը կը
մլրդուին իր անւամբ։ Քիւրդերը կը սկսին գործի, թալան-
ներու, առեւանգութեներու, սպանութիւններու և ի վերջոյ
մեծ ու փոքր կոսորածներու ձայներ կը լսւին ամեն կող-
մէ. Կը մնայ քուրդ չի գտնուող տեղերու համար ալ պատ-
շաճ տնօրինութիւն մը ընել. Այդ աւելի դիւրին. կեղրունէն
հրաման կը տեղայ ամեն գաւառական անկիւններ՝ որպէս
զի թէ մասնակի կերպով խալախ ամբոխը զրգունն եւ թէ
մզկիթներէն պաշտօնապէս քարոզ կը խօսւի հաւատացեալ
մուսուլմաններու, որպէս զի վերջիններս ալ սկսին «քնա-
ջնաջ ընելու» նպատակին ի նպաստ աշխատիլ. Մողեռանդ
հաւատացեալները կը բորբոքին կեաւուր հայերու դէմ. ա-
նոնց ըրած շահատակութեանց ձայներն ալ կը բարձրանան
այն կողմէրէն։

Այս ամենը աղէկ. բայց անդին կառավարութեան աշխատին փուշ մը կայ. Սաստանի անառիկ լեռները կանգնած են իւր դէմ, որոնք բնաւ չեն ուղեր զինք լուլ, տուրք տալ: Նա կը հաւատառյ, որ սարերուն մէջ է Հայկական լեռու գոխութեան օրըանը, հետեւաբար սան պէտք է այդ լեռունակորութ տապիել: Հրաման գրամանի վրայ կը տեղայ թէ Դ. զրաբանակին հրամանսատար Զէքի վաշային, թէ Բաղդի կուտակալ Թանսին վաշային եւ թէ քուրդ պէյերու, որպէս զի ձեռնարկեն այդ մեծ զործին եւ կը ձեռնարկեն ու կը յաջողին: Սասուն արեան մէջ կը լողայ, գաղան արբարոսութիւնը չի ինայեր ոչ մատղաշ տղեկներու, ոչ կոյսերու, ոչ մայրերու եւ ոչ ծերերու ու պառաւներու: Բարբարոսական դարերը իրաւամբ կը նախանձին ներկայ դարավերջին դէմ:

Յաջող լրութիւն կայծակի արագութեամբ կեղոն կը հասնի,
Համիդի դէմքին վրայ դիւային գոհ ժախտ մը կը փայլէ—
Սասուն ոչնչացաւ, Որրանը կործանեցաւ...

Բայց, լրոք, կը կարծե՞ս, ո՞վ վատավառ տուլթան, թէ
աշողեցար Սասունը կործանել. կը հաւատա՞ս թէ այլ եւս
Սասուն չկայ, չարաչար կը խարւիս. մարդկային ձեռքով
լառուցած շնչքեր միայն հիմնայատակ եղան, մարդու

յառաջ բերած սերնդէն մաս մը միայն անհետացաւ: Բայց
այդ կործանւած տուները մարդկային նոյն ձեռքով մի՞թէ
դարձեալ չպիտի վերաշնուրին, մարդկային նոր սերունդ-
ները մի՞թէ չպիտի լցնան պակսութ մասող. այս, ասենք
բոլորը պիտի կատարեին հակառակ քո կատաղութեանդ,
լիշակեր ճիւաղ սուլթան: Ու մղեգնէ՛ մանաւանդ, որ մեր
սրտերը այժմ ցաւերու բլորովին վարժւած ըլլարով, պիտի
տոկան քու ասեն: Կրչային բարբայտսութեանցդ, միշտ
ամրապիներ պիտի մնան՝ չզոհելով ո՛չ մէկ միաբ ազատու-
թեան վսիւմ գաղափարի: Ու քու այժմու գոնունակ ժաիթը
սարսափի պիտի փոխւի, երբ հայկական բուն ապսուած-
բութիւնը, այսչափ նախաքայլերէ վերջ, պայմիտ ամե-
նուած: Աւ հաւատա՛, ո՛վ Ներոններու հրաշակերու, թէ այդ
որոտալից ժամը հեռու չէ...

Հայ եղբայրներ, ճանչնանք ններկայ ճգնաժամային ըստէին ահազին նշանակութիւնը, զիտնա՞նք ուրեմն այսպատմական բողէն համապատասխան, նպատակայարմարժամանցով սահեցնել: Ամենամեծ ոմիր մէ այս եղական վայրկեանին ծալապատիկ նստիլը. ամօթ չէ մեղ կասիլ այն պահուն, երբ արդէն տեսած ենք իւր բորոր վսեմութեամբը մեր նպատակէար: Թող ուրեմն ամեն հայ իւր օգնութեան բաժինը հատուցանէ իւր ազգին կամ կեանքով, կամ խօսքով եւ կամ դրամով, որոնք, երեքն ալ այժմու կարիքին ամենաանհրաժեշտ տարրերն են: Եւ իւր այդ պարուքը կատարելէն վերջ միայն թող ամեն ոք իւր խիզը ճը հանդարտած գտնէ: ապա թէ ոչ, թող գիտնայ թէ ապագայ սերունդին, որու փրկութիւնը մեր գործունէութիւնէն կախեալ է, անեղ ու անաչառ դատապատահին առջեւ անէծքի ու նախատահինքի բաժին միայն պիտի ստանայ:

Օգնե՞նք իրար եղբայրնե՞ր, համսե՞նք ամե՞ն տեղ. Մեր նպատակակիտին կարենալ համսելու համար դեռ բաւական փուշեր կան կոփմալիք, անվեհեր կերպով յարատելինք մեր ուղին. մեր արած իւրաքանչիւր քայլը թող աստիճան մը ևս աւելի ամրապնդէ մեր հոգին. Պարտաճանաչչութեան վսեմ ոգով տոգորւած, առանց կասելու դիմենք դէպի մեր կէտնապատակին:

Յառաջ ուրեմն, եղայիններ, մի՛տ յառաջ...

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՄԱՏԻԿ ՄԱՐՄԵԼԻ

ՀԱՐԿՈՒԾ

ՍօՓիայից մեջ հերոադրում են. —

Այս հեռագիրը, որ ստացանք ամոխ Յ. Խ. (ն. տ.), անմիջապէս տպաղբելով առանձին թերթիկների վրայ, ցըւցիլինք:

Դաշնակցութեան անծանօթներից խնդրում է Թղթակցութեան նւիրատութեան համար դիմել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիննա, Դաշնակցութեան ազատ տուպարան